-333-

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ՍԽՀՄ ԺԿԽ-ԻՆ ԿԻՑ

# ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՌԵԼՍ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՉԻ

# ՀՐԱՀԱՆԳ

ՅԵՐԵՎԱՆ 1932

-533-
22 NOV 2017

ՃԱՆՏՐԱՆՍՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ՑՈՒԴՈՐՏՐԱՆՍ)

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԱՎՏՈ-ՍԱՅԼԱՏԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԱՐՊԵՏԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

1/2

-533-

1-3191գր

Հաստատում եմ՝
Ի տ. ՃԱՆՏՐԱՆՍՆԵՐԻ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ՝ Ն. ՎԱՐԱՔՅՈՎ.
29-ն մայիսի, 1931

## Ա. ԳԼՈՒԽ

## ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԱՐՊԵՏ ՆՇԱՆԱԿԵԼԸ ՅԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՎՈՐՈՆՑ ՊԵՏՔ Ե ԲԱՎԱՐԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԱՐՊԵՏԸ

1. Ավտո-սայլատար ճանապարհների գծամասը գծամասի պետի կողմից բաժանվում է առանձին մանր ճանապարհամասերի—վը-ծաշրջանների: Այդ բաժանումը հաստատվում է մարզային (յերկրային կամ ավտոնոմ-հանրապետական) ճանտրանսի պետի կողմից, իսկ Միութենական հանրապետության մեջ մարզային բաժանում չլինելու դեպքում՝ գլխավոր ճանտրանսի պետի կողմից:

2. Յուրաքանչյուր գծաշրջան հանձնարարվում է կառավարելու մի ճանապարհի վարպետի:

3. Ճանապարհի վարպետը նշանակվում է գծամասի պետի կողմից: Ճանապարհի վարպետին պաշտոնից հեռացնելը, տեղափոխելը կամ արձակուրդ տալը նույնպես կատարում է գծամասի պետը:

4. Ճանապարհի վարպետի պաշտոնում նշանակվող անձնավորությունը պետք է բավարարի հետևյալ պայմաններին.

ա) Ունենա համապատասխան տեխնիկական կրթություն կամ գործնական ստաժ:

բ) Ծանոթ լինի ճանապարհների և կառուցվածքների հիմնական տիպերին (տեսակներին), նրանց կառուցման, վերանորոգման և պահպանման կանոններին:

գ) կարողանա կազմակերպել ավտո-սայլատար ճանապարհների վերանորոգում:

դ) Կարողանա կատարել հողային և այլ աշխատանքների չափում:

ե) Կարողանա սահմանել աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի քանակը, կատարել տեղական նյութերի պատրաստումը և ընդունումը, բաշխել նրանց ըստ աշխատանքի և կարողանա որոշել նյութերի որակը:



զ) Ծանոթ լինի ճանապարհային գործի մեջ գործադրվող հիմնական ճանապարհային մեքենաների և սարքավորման հետ:

է) Ծանոթ լինի ավտոսայլատար ճանապարհների վրա գործադրվող հիմնական ճանապարհային մեքենաների և սարքավորման հետ:

ը) Իմանա՝ իր գործնական կարիքների սահմաններում՝ աշխատանքային և առողջապահական օրենսդրությունը:

թ) Ծանոթ լինի սույն հրահանգի և իր ըստորադաս անձնավորությունների հրահանգների հետ:

ժ) Քննության (փորձարկման) յենթարկվի ճանապարհի վարպետի պաշտոնի համար, Ըստ մարզային կամ Գլխճանտրանսի կողմից սահմանվող ծրագրի (յեթե նա չունի տեխնիկական կրթություն), հետևյալ ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովում՝

1) Վարչության,

2) պրոֆկազմակերպության և ճարտարապետ-տեխնիկական բյուրոյի,

3) փորձառու ճանապարհի վարպետի:

## Բ. ԳԼՈՒԽ

## ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Ճանապարհի վարպետը յենթարկվում է անմիջականորեն գծամասի պետին և կատարում է պետի և նրա օգնականի գրավոր կամ բանավոր կերպով գծամասի գործակալների միջոցով տրված բոլոր կարգադրությունները:

6. Ճանապարհի վարպետը պարտավոր է կատարել նույնպես մարզային (յերկրային-ավտոնոմ-հանրապետական), Ճանտրանսի Գլխճանտրանսի և Կենտ. Ճանտրանսների Վարչության պետերի կամ նրանց կողմից գործուղված անձնավորությունների բոլոր գրավոր կամ բանավոր կարգադրությունները. Ճանապարհի վարպետը պարտավոր է ստացած բոլոր կարգադրությունների մասին անհապաղ հայտնել գծամասի պետին:

7. Ճանապարհի վարպետի իրավասության տակ են գտնվում և նրան են յենթարկվում գծաշրջանի բոլոր հաստիքային բանվորները՝



վերանորոգիչները, կամուրջների պահակները և գծաշրջանում գտնվող աշխատանքներ կատարող ժամանակավոր բանվորները:

## Գ. ԳԼՈՒԽ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԱՐՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

8. Ճանապարհի վարպետը չի կարող առանց գծամասի պետի նախնական թույլտվության, բացակայել իր գծաշրջանից, բացառությամբ այն դեպքերի, յերբ նա հաճախում է՝

ա) Պաշտոնական գործերով՝ տերիտորիայի սահմաններում գտնվող գյուղխորհուրդը և շրջգործկոմը:

բ) Նյութերի պատրաստման նպատակով բանվորներ կամ սայլեր վարձելու բոլոր դեպքերը:

Ծանոթություն.— Ճանապարհի վարպետը կարող է գծամասի գրասենյակը գալ միմիայն բացառիկ, արտակարգ դեպքերում կամ գծամասի պետի կարգադրությամբ։

9. Ճանապարհի վարպետին իրավունք է տրվում՝

ա) Ընտրություն կատարել և ներկայացնել գծամասի պետին ի հաստատություն վերանորոգիչների և կամուրջների պահակների՝ նրանց պաշտոնի նշանակելու, տեղափոխելու, արձակուրդ տալու կամ պաշտոնից արձակելու համար։

բ) Վարձել ժամանակավոր բանվորներ և սայլեր, գծամասի պետի առաջադրությունները կատարելու համար։

10. Ճանապարհի վարպետը հետևում է, որպեսզի իրեն ենթակա բանվորները լավ իմանան իրենց պարտականությունները, հրահանգները, ճիշտ հասկանան այդպիսիները և հսկում են նրանց կատարմանը։

11. Հիվանդության և արձակուրդի ժամա-



նակ ճանապարհի վարպետը իր պարտականությունները հանձնում է գծամասի պետի կողմից նշանակված փոխարինողին։

12. Պաշտոնից արձակվելու դեպքում, ճանապարհի վարպետը պարտավոր է, գծամասի պետի կարգադրությամբ, իր տեղակալին հանձնել գծաշրջանը, վերջինում գտնվող բոլոր գույքով և փաստաթղթերով։ Կանխիկ գումարը ճանապարհի վարպետը հանձնում է գծամասի գրասենյակը։

13. Ճանապարհի վարպետի վրա պատասխանատվություն է դրվում պահպանելու իր իրավասության տակ գտնվող տարածման մասը—արհեստական կառուցվածքները, քաղաքացիական շենքերը, ճանապարհային մեքենաները, գույքը, գործիքները և նյութերը։

14. Իր գծամասի շրջաններում ճանապարհի վարպետը պատասխանատու է՝ ա) ճանապարհների և նրանց վրա գտնվող կառուցվածքների դրության, բ) նրանց կանոնավոր վիճակում պահելու և անընդհատ երթևեկություն պահպանելու, գ) հսկողություն ունե-

նալու դծաշրջանի հասարակայնն կազմի վրա, նույնպես և ժամանակավոր բանվորների կողմից ճանապարհի և կառուցվածքների պահպանման և վերանորոգման նպատակով կատարվող աշխատանքներին:

15. Ճանապարհի վարպետը պարտավոր է դիմել շրջանային գործադիր կոմիտեներին և գյուղխորհուրդներին ամեն տեսակի աջակցություն ստանալու, օրինակ. միջոցներ ձեռք առնելով՝ ա) ճանապարհների և կառուցվածքների փչացումները, հափշտակումները և քայքայումները կանխելու կամ կարգի բերելու և նույնպես բ) յերթևեկության ընդհատումը վերականգնելու անհրաժեշտության, դժբախտ պատահարների և այլ նման դեպքերում:

16. Տեղական իշխանությունների պահանջով ճանապարհի վարպետը պարտավոր է նրանց տեղեկանքներ (ինֆորմացիա) տալ աշխատանքների և նյութերի պատրաստման ընթացքի, նույնպես և իր դծաշրջանի ճանապարհների և կառուցվածքների, ճանապարհ-



ների վրա տեղի ունեցած պատահարների մասին և այլն:

Ճանապարհի վարպետը պարտավոր է ներկա լինել իր դծաշրջանում կատարվող աշխատանքների, նույնպես ճանապարհների և կառուցվածքների զննության և ստուգումների ժամանակ:

17. Իր աշխատանքներում ճանապարհի վարպետը ղեկավարվում է ընդհանուր օրենքներով, նաև ճանապարհների և կառուցվածքների վերանորոգման և պահպանման մասին գոյություն ունեցող կանոններով և սույն հրահանգով:

18. Ճանապարհի վարպետը պարտավոր է դծամասի պետին տեղեկանքներ ներկայացնել աշխատանքների և նյութերի պատրաստման, նույնպես աշխատանքների և կառուցվածքների դրության, ճանապարհի վրա տեղի ունեցած հափշտակումների, պատահարների մասին և այլն:

19. Ճանապարհի վարպետի վրա պարտականություն է դրվում իր ժամանակին ստա

նալ նյութեր, գործիքներ, ինվենտար ու մեքենաներ և այդպիսիք պահպանել սահմանված կարգով։

20. Ճանապարհի վարպետը պարտավոր է վերացնել ճանապարհի կանոնավոր յերթևեկությանը խոչընդոտ հանդիսացող արգելքները, օգնություն ցույց տալ վնասվածներին և այլն։

Ճանապարհի վարպետը հայտնում է իշխանության մոտակա մարմիններին յերթևեկության ընդհատման և գծաշրջանում տեղի ունեցած պատահարների մասին, որոնց հետևանքով մարդկանց կամ կենդանիների խեղանդամության կամ մահացության դեպքեր է առաջացել։

21. Շենքը, կառուցվածքները կամ ճանապարհներին կից անտառները հրդեհվելու դեպքում, ճանապարհի վարպետը պարտավոր է հեռախոսի, հեռագրի կամ կենդանի կապի միջոցով շտապ զեկուցել գծամասի պետին ու տեղական իշխանության մարմիններին և միաժամանակ կտրուկ միջոցներ ձեռք առնել հրդեհը հանգցնելու։



Դ. ԳԼՈՒԽ

## ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

22. Ճանապարհի վարպետն իրեն յենթարկվող բանվորների միջոցով՝ ինչպես և ինքն անմիջապես՝ հսկում է իր գծաշրջանի սահմաններում գտնվող ճանապարհների, կառուցվածքների, մեքենաների, գործիքների և նյութերի անվտանգ պահպանմանը։

23. Ճանապարհները և կառուցվածքները վաղաժամ փչացումից ու մաշվելուց պահպանելու համար, ճանապարհի վարպետը հսկում է, որպեսզի՝

ա) Ճանապարհի կողմերի, նաև լեռնային ու ճյուղավորվող առուները (կանավները)՝ նրանց վրայով յերթևեկելու և անասունների անցուդարձի հետևանքով՝ չլցվեն, չքանդվեն ու չփչանան,

բ) Կամուրջների և խողովակների բացվածքը չծածկվի և առհասարակ կանոնավոր վիճակի մեջ պահպանվի,

գ) չքայքայվեն փորվածքների և լիցքերի շեպերը,

դ) չփչանան ճանապարհները և կառուցվածքները, չգրավվի օտարացման մասը և այնտեղ զանազան կեղտոտություններ, աղբ, ձյուն և այլն չթափվեն,

ե) կրակ չվառվի կամուրջների տակ և 100 մետրից պակաս հեռավորության վրա, չծխեն կամուրջների վրա և առհասարակ պահպանվեն ավտո-սայլատար ճանապարհների և նրանց վրա գտնվող կառուցվածքների նկատմամբ հրշեջ պաշտպանության համար նախատեսված կանոնները,

զ) ճանապարհների և կամուրջների վրայով յերթևեկություն կատարվի ավտո-սայլատար ճանապարհների համար սահմանված յերթևեկության որենքներով:

24. Ճանապարհների, կառուցվածքների և ճանապարհային գույքի փչացման կամ հափշտակման դեպքում, ճանապարհի վարպետը, տեղական իշխանությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, տեղի ունե-



ցածի մասին արձանագրություն է կազմում և արձանագրությունը ներկայացնում է գծամասի պետին, մեղավորներին պատասխանատվության կանչելու համար:

Ճանապարհի վարպետը արձանագրություններ է կազմում նաև ավտո-սայլատար ճանապարհների յերթևեկության կանոնները խախտելու դեպքում:

25. Քաղաքացիական շենքերի վերաբերյալ ճանապարհի վարպետը պարտավոր է հետևել, որպեսզի շենքերը զբաղեցնող անձնավորությունների կողմից պահպանվեն ներքին կարգ ու կանոնը և ժամանակին կատարվի անհրաժեշտ վերանորոգումը:

26. Բոլոր թերությունների և վնասվածքների մասին, որոնք ճանապարհի վարպետն անզոր է ուղղել իր ուժերով, նա հայտնում է գծամասի պետին:

27. Ճանապարհի վարպետի վրա պարտականություն է դրվում կատարել իր գծաշրջանի ճանապարհների վրա ամեն տեսակի դիտողություններ, ինչպիսիք են՝ կեղևի չափումներ, յերթևեկության հաշվառում, ա

նիվներից առաջացած հետքերի և կամուրջամերձ խորությունների չափումը և այլն։ Այդ աշխատանքները ճանապարհի վարպետը կատարում է գծամասի պետի առաջադրանքների համաձայն։

28. Աշխատանքների կատարումը և նյութերի պատրաստումը ճանապարհի վարպետն իրագործում է, առաջնորդվելով տեխնիկական կանոններով, նորմերով, հրահանգներով՝ գծամասի պետի կարգադրություններով ու ցուցմունքներով։

## ՅԸ. ԳԼՈՒԽ

## ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

29. Ճանապարհները և նրանց վրա գտնվող կառուցվածքներն անվթար դրության մեջ պահպանելու բոլոր աշխատանքները ճանապարհի վարպետը կատարում է իր տրամադրության տակ գտնվող հաստիքային բանվորական ուժի միջոցով՝ գծաշրջանի նախօրոք կազ-



մած և հաստատված արտադրական պլանի համաձայն (քաղվածք գծամասի արդֆինպլանից), առանց յուրաքանչյուր անգամ այդ մասին գծամասի պետի թույլտվությունը ստանալու։

30. Ճանապարհի վարպետը գծամասի սահմանված ժամկետներում տեղեկանքներ է ներկայացնում գծաշրջանի ճանապարհների և կառուցվածքների դրության մասին և գծամասի ներկայացուցչի հետ կազմում է գծաշրջանի դեֆեկտային ցուցակը, վորպեսին անհրաուին գծամասի պետի թույլտվությունը ստանալու։

31. Ճանապարհի վարպետը բաշխում է աշխատանքները բանվորների մեջ, տալիս է նրանց ցուցմունքներ, ստուգում է աշխատանքների կատարման կարգը, մատակարարում է նրանց անհրաժեշտ նյութեր և գործիքներ ու կատարում է աշխատանքների ընդունելություն ըստ վորակի և քանակի՝ ավարտած գործ[illegible] աշխատանքների վճարումը կատարելու համար։

ԳՐԱԴԱՐԱՆ

32. Աշխատանքների կատարման ժամանակ ճանվարպետը պահում է աշխատանքների մատյանը, բանվորական ամեն ցուցակները և այլն, հաղորդակցության ճանապարհների տեխնիկական հաշվառման և հաշվետվությունների համար սահմանված ձևերի համաձայն:

33. Ճանապարհի վարպետը մի քանի օրվա (դեկադ, հնգօրյակ) աշխատանքների առաջադրությունները է տալիս այն վերանորոգիչներին, որոնք սպասարկում են առանձին իրենց ամրացված ճանապարհամաս (արխոդ) և կամուրջների պահակներին՝. համապատասխան գրանցում կատարելով վերանորոգիչների գրքույկներում:

Նույն գրքույկներում նա նշանակում է աշխատանքների կատարումը և ընդունելությունը:

34. Գծաշրջանի արտելների և բրիգադների կողմից սպասարկվելու դեպքում՝ ճանապարհի վարպետը գլխավորում է արտելներն և բրիգադների և գծաշրջանի աշխատանքները կատարվում են ճանվարպետի անմիջական ղեկավարությամբ և անպայման նրա ներկայությամբ:

35. Ճանվարպետի վրա չի դրվում իր գծաշրջանի ճանապարհների և կառուցվածքների պահպանման, ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքների կատարումը, իսկ ճանապարհների և կառուցվածքների հիմնական վերակառուցման աշխատանքները ռենովացիան և ռեկոնստրուկցիան, կատարվում են, որպես օրենք, հատուկ ճանապարհաշինարարական կազմակերպությունների կողմից: Ճանվարպետի գծաշրջանի սահմաններում առանձին աշխատանքների կատարումը կարելի չէ հանձնարարել անհատ անձնավորությունների:

36. Ճանապարհի վարպետը պարտավոր է ձեռնարկել իրենից կախված բոլոր միջոցառումները, իրեն հանձնարարված աշխատանքների իրագործման համար (ըստ գծամասի արդֆինպլանի քաղվածքի), որի համար նա պետք է՝ իր տրամադրության տակ գտնվող բանվորների հետ միասին՝ ուսումնասիրի իր

աշխատանքների պլանը, իրական աջակցություն ցույց տա հարվածայիններին և սոցմրցողներին, հաշվի առնի նրանց աշխատանքի արդյունքները պրոֆմարմնի ներկայացուցչի մասնակցությամբ, ընտրություն անի հարվածայիններին ներկայացնելու գծամասի պետին պարգևատրման համար:

Սոցմրցման և հարվածայնության աշխատանքները պետք է տանել սերտ կապ պահպանելով պրոֆեսիոնալ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

37. Ճանվարպետը պետք է լինի հասարակական գծով լավ աշխատող և իր գծաշրջանում սոցիալիստական մրցման, հարվածայնության գաղափարների և սոցիալիստական աշխատանքի այլ մեթոդների տարածողը:

38. Բոլոր աշխատանքները և պատրաստումները (նյութերի) ճանվարպետը կատարում է տնտեսական ձևով. աշխատանքներից ամենակարևորը նա կատարում է իր անմիջական ղեկավարությամբ և միջոցներ է ձեռք առնում աշխատանքներն ավարտելու ճիշտ սահմանված ժամկետներում, հնարավորու-



թյան սահմաններում անտեսելով բաց թողած միջոցները՝ աշխատանքների կատարման ու նյութերի պատրաստումների վերաբերյալ գործող տեխնիկական պայմանների և կանոնների պարտադիր պահպանմամբ:

39. Աշխատանքների և պատրաստումների կատարման ժամանակ ճանապարհի վարպետը ձեռք է առնում բոլոր անհրաժեշտ միջոցները ճանապարհի անվտանգ և անընդհատ երթևեկությունը պահպանելու համար:

40. Նյութերի ամբողջ պատրաստումը և այդ նյութերի գծի վրա փոխադրելը, իբրև օրենք, պետք է կատարվի ձմեռային սեզոնի ընթացքում:

41. Ճանապարհի վարպետը պարտավոր է մանրամասն տեղեկություն ունենալ իր գծաշրջանի սահմաններում գտնվող վերանորոգման աշխատանքների համար օգտագործվող տեղական նյութերի, տեղի, նրանց որակի, մոտավոր ծավալի (պաշարի) և արդյունահանման յեղանակների (ձևերի) մասին:

42. Ճանապարհի վարպետը պարտավոր է տեղեկություններ ունենալ նաև փոխադրական միջոցների և զանազան վորակավորում ունեցող բանվորական ուժի քանակի և բնակավայրերի մասին, վորպիսի նպատակով նա պետք է կապ պահպանի տեղական իշխանությունների և նույնպես գյուղատնտեսական կազմակերպությունների հետ (կոլտնտեսություն, ՄՏԿ, խորհտնտեսություն և այլն):

43. Ճանապարհի վարպետը, շրջգործկոմի հետ համաձայնեցնելուց հետո, տեղական ազգաբնակչությունը յենթարկում է աշխպարհակի իր գծաշրջանի ճանապարհների աշխատանքներում: Այդ աշխատանքների ժամանակ ճանապարհի վարպետը կատարում է նրանց հաշվառումը և հաշվետվություն է տալիս շրջգործկոմին:

Շրջգործկոմի կողմից ազգաբնակչության մասնակցությամբ աշխպարհկի կարգով ճանապարհային աշխատանքներ կատարելիս, ճանապարհի վարպետը տեխնիկական հարցերում օգնություն է ցույց տալիս շրջ գործկոմին:



## Զ. ԳԼՈՒԽ

## ԳԾԱՇՐՋԱՆԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՆՅՈՒԹԵՐՈՎ, ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ, ԻՆՎԵՆՏԱՐՈՎ ՅԵՎ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏՈՎ

44. Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ գործիքները, ինվենտարը, նյութերը և արտահագուստը ճանապարհի վարպետը պետք է նախօրոք պահանջի գծամասի պետից և իր ժամանակին բաշխի բանվորներին:

45. Բոլոր գործիքները, ինվենտարը, նյութերը և արտահագուստը ճանապարհի վարպետը պարտավոր է պահել, պահպանել և ծախսել ըստ սահմանված կանոնների: Պահեստները պետք է ապահոված լինեն հակահրշեջ սարքավորումով, վորպիսին ճանապարհի վարպետը պարտավոր է պահպանել պատշաճ դրության մեջ և ժամանակ առ ժամանակ ստուգել:

46. Բանվորներին արտահագուստ տալու ու նրա պահպանման կարգը և մաշված հագուս-

մը նորով փոխարինելը ճանապարհի վարպետը տնօրինում է մարզային կամ Գլխճանտրանսի ցուցմունքների համաձայն։

47. Հաստիքային բանվորներին տրված արտահագուստը, նմանապես ինվենտարն ու գործիքները, ճանապարհի վարպետը գրանցում է նրանց աշխատանքային գրքույկում և բանվորին պաշտոնից արձակելիս յետ է ընդունում նրանից, համապատասխան նշումներ անելով գրքույկի մեջ։ Ժամանակավոր բանվորների նկատմամբ գրանցում է կատարում հաշվեգրքույկների մեջ կամ տալիս է ստացականով (գրքույկի բացակայության դեպքում)։

48. Ճանապարհի վարպետը պարտավոր է նյութերի, գործիքների և արտահագուստի հաշվառում պահել ավտո-սայլատար ճանապարհների հաշվառման և հաշվետվությունների կանոնադրության համաձայն՝ սահմանված ձևերով. ճանվարպետը նույնպես պահում է բանվորական ուժի և ավտո-սայլատար տրանսպորտի ու նրանց աշխատանքի հաշվառում։



49. Ճանապարհային գույքը մի գծաշրջանից մյուս գծաշրջանին հանձնելը ճանապարհի վարպետը կատարում է գծամասի պետի կարգադրությամբ, այդ մասին կազմելով համապատասխան արձանագրություններ՝ հանձնող և ընդունող գծաշրջանների գործակալների ստորագրություններով։

## Ե. ԳԼՈՒԽ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

50. Ստացվող ճանապարհային ամբողջ գույքը և դրամական գումարները ճանապարհի վարպետը մուտք է գրում նրանց համար հաստատված գրքերում։

51. Բանվորական ուժի և տրանսպորտի վարձատրումը, վորպես որենք, կատարում է գծամասի պետը, իր կողմից անմիջապես կարվող ծախսերը ճանապարհի վարպետը կատարում է գծամասի պետի կողմից հրահանգված կանոնների և ձևերի համաձայն։ Դրամական և նյութեղենի փաստաթղթերը ձևակեր-

զեկույց հետո, ներկայացվում են գծամասի գրասենյակը:

52. Ճանապարհի վարպետը սահմանված ժամկետներում գծամասի գրասենյակին տեղեկություններ է ներկայացնում նյութերի, ինվենտարի, գործիքների, նույնպես և աշխատանքների պատրաստումների դրության և ընթացքի մասին՝ գծամասի կողմից առաջադրված ձևերով:

53. Ճանապարհային գույքի ամեն տեսակի կորուստները, հափշտակումները, ինչպես նրա հանձնումը, ճանապարհի վարպետը ձևակերպում է արձանագրություններով և համապատասխան զեկուցագրերով՝ մարզային կամ գլխճանապարհի կողմից սահմանված ձևերի համաձայն:

## Ը. ԳԼՈՒԽ

## ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԱՐՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

54. Գծաշրջանի բոլոր պատահարների դեպքում, երբ փլվածքների հետևանքով ընդհատվել է երթևեկությունը, տեղի են ունեցել ճանապարհների և կառուցվածքների քայքայում կամ կործանում, ինչպես և հրդեհների ու գծաշրջանում տեղի ունեցած բոլոր դըժբախտ դեպքերի մասին՝ մարդկանց և անասունների խեղանդամություն, մահացություն՝ ճանապարհի վարպետը պետք է անհապաղ հաղորդի գծամասի պետին և տեղի մասնակի իշխանություններին օգտագործելով այդ նպատակի համար հեռախոսային, հեռագրական և կենդանի կապը:

55. Հաղորդելով պատահարների մասին, ճանապարհի վարպետը պարտավոր է միաժամանակ վերացնել երթևեկության ընդհատումը, օգնության և աջակցության ցույց տա վնասվածքներին և ցանկափակի վտանգավոր տեղերը՝ աչքի ընկնող ազդանշաններով (բարյեր):

56. Ճանապարհի երթևեկության ընդհատման, տեղի ունեցած դժբախտ պատահարների, հափշտակման, փչացումի, հրդեհի և տեղի ունեցած այլ դեպքերի մեջ մեղավոր անձնա-

վորություններին հայտնաբերելու դեպքում, ճանապարհի վարպետը պարտավոր է կալանավորել այդ անձնավորություններին և հանձնել նրանց տեղի իշխանության մոտակա մարմիններին։

57. Ճանապարհային կառուցվածքների կամ ոտարացման մասում, նույնպես և անտառում հրդեհ առաջանալու դեպքում, ճանապարհի վարպետը գծամասի պետին և տեղական իշխանություններին հայտնելուց զատ, կտրուկ միջոցներ է ձեռք առնում հրդեհը հանգցնելու համար։

58. Ճանապարհի վարպետի վրա պարտավորություն է դրվում, առանց վորևե հապաղման, միջոցներ ձեռք առնել ճանապարհների և կառուցվածքների վնասվածքները, յերթևեկության ընդհատումը, հափշտակումները, փչացումները, հրդեհները և այլն կանխելու, նման պատահարներ առաջանալու հնարավորություններ հայտնաբերելու դեպքում, կանխող միջոցառումներ ձեռնարկելու հետ միասին, ճանապարհի վարպետը միաժամանակ



հայտնում է գծամասի պետին և տեղական իշխանություններին սպառնացող վտանգի և իր կողմից ձեռք առած կանխող միջոցների մասին։

59. Յերթևեկության ընդհատման և վերևում ցույց տված զանազան տեսակի պատահարների դեպքում, յերթևեկությունը վերականգնելու և առհասարակ պատահարների հետևանքները վերացնելու համար, ճանապարհի վարպետը պարտավոր է օգտագործել ազգաբնակչությանը՝ տեղական իշխանությունների միջոցով։ Նմանապես թույլատրվում է նրան վարձել ժամանակավոր բանվորներ և սայլեր, հայտնելով այդ մասին գծամասի պետին։

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ի. ՍԿՈՐԻԿ

ՆՈՐՈԳՄԱՆ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ՊԵՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝ Դ. ՍԱՖԱՐՈՎ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Պատվ. 2419 Տիրաժ 200

-20-

ՀՀ Ազգային գրադարան
NL0927581

1932 - 553

1
3191